ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/57

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54» ծածկագրերով գնանշման հարցում, Հանդերձանքի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4», «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2536-2020 և 26/26-1/2545-2020 գրություններով «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 18.02.2020թ. թիվ 3/27/5373-20 և 3/27/5383-20 նույնաբովանդակ գրությունների հիման վրա, 21.02.2020թ.-ին «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 21.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/57 համարի ծածկագիրը և 24.02.2020թ.-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

02.03.2020թ.-ին, 11.03.2020թ.-ին և 23.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.03.2020թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 18.02.2020թ.-ին թիվ 3/27/5373-20 և 3/27/5383-20 նույնաբովանդակ գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով, որ «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» պայմանագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուի ներկայացուցիչը ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

3. <u>«Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2536-2020 և 26/26-1/2545-2020 գրություններով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

«Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ն 10.03.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«2019թ. հունիսի 25-ին և 2019թ. հուլիսի 7-ին «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել են «Հանդերձանքի» մատակարարման համապատասխանաբար երկու պայմանագիր՝ թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» և թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» ծածկագրերով պայմանագրերը (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1 և Պայմանագիր 2):

Պայմանագիր 1-ի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեում Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակա-ցուցով նախատես¬ված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագիր 1-ի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսվել է հետևյալը.

չափ h/h	Անվանում	միավոր	Ընդհանուր	Հասցե	30 օրացուցային օր	90 օրացուցային օր	180 օրացուցային օր	Ժամկետը
5	Կոստյում (բաճկոն-տաբատ՝	հատ	650	Արշակունյաց	325	162	163	Պայմ. ուժի

	կիսաբամբակյա կեպիով)			*77Ա*				*մեջ մտնել ուց մինչև 20.12. 19թ.*
7	*Կոստյում/ բաճկոն-տաբատ գունաքողարկող կեպիով/*	*հատ*	*400*	*Արշակունյաց 77Ա*	*200*	*100*	*100*	*Պայմ. ուժի մեջ մտնել ուց մինչև 20.12. 19թ.*

Պայմանագիր 1-ի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 30.01.2020թ. թիվ 27/76 գրությամբ ՀՀ ոստիկանությունը նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի, նույն Պայմանագրի 8.9-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 33-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջները:

Նշված գրությամբ ՀՀ ոստիկանությունը «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը. «Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարվեր՝ 650 հատ կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով), 400 հատ կոստյում /բաճկոն-տաբատ գունաքողարկող կեպիով/, սակայն մատակարարում ընդհանրապես չի իրականացվել:

Պայմանագիր 2-ի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեում Գնորդին մատա-կա¬րարել պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացուցով նախատես¬ված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագիր 2-ի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսվել է հետևյալը.

չափ. հ/հ	*Անվանում*	*միավոր*	*Ընդհանուր*	*Հասցե*	*30 օրացուցային օր*	*90 օրացուցային օր*	*180 օրացուցային օր*	*Ժամկետը*
1	*Կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով կ/թ)*	*հատ*	*249*	*Արշակունյաց 77Ա*	*41*	*90*	*118*	*Պայմ. ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.19 թ.*
3	*Փողկապ/ փողկապսև/*	*հատ*	*2000*	*Արշակունյաց 77Ա*	*328*	*726*	*946*	*Պայմ. ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.19 թ.*
4	*Ներքնաշապի /շապիկ կիսաթև/*	*հատ*	*1080*	*Արշակունյաց 77Ա*	*177*	*392*	*511*	*Պայմ. ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.19 թ.*
13	*Թևքանշան / թևքանշան <Ոստիկանություն>*	*հատ*	*10 000*	*Արշակունյաց 77Ա*	*1640*	*3630*	*4730*	*Պայմ. ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.19 թ.*
20	*Կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով)*	*հատ*	*1006*	*Արշակունյաց 77Ա*	*165*	*365*	*476*	*Պայմ. ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.19 թ.*
21	*Կոստյում (բաճկոն-տաբատ՝ գունաքողարկող կեպիով)*	*հատ*	*500*	*Արշակունյաց 77Ա*	*81*	*182*	*237*	*Պայմ. ուժի մեջ մտնելուց մինչև 20.12.19 թ.*

Պայմանագիր 2-ի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 30.01.2020թ. թիվ 27/80 գրությամբ ՀՀ ոստիկանությունը նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի, նույն Պայմանագրի 8.9-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 33-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջները:

Նշված գրությամբ ՀՀ ոստիկանությունը «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը. «Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարվեր՝ 249 հատ կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով կ/թ), 870 հատ Փողկապ /փողկապ սև/, 1006 հատ կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով), սակայն մատակարարում ընդհանրապես չի իրականացվել:

Այնուհետև, ՀՀ ոստիկանությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 18.02.2020թ. գրությամբ ներկայացրել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2019թ. հունիսի 25-ին և 2019թ. հուլիսի 7-ին «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության միջև կնքվել են «Հանդերձանքի» մատակարարման համապատասխանաբար «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» ծածկագրերով պայմանագրերը:

Վերը նշված պայմանագրերը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. թիվ 27/76 և 30.01.2020թ. թիվ 27/80 գրություններով միակողմանի լուծվել են՝ հիմք ընդունելով Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի, նույն պայմանագրերի 8.9-րդ կետի և Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի պահանջները:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/57 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1.Եվ այսպես, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված 30.01.2020թ. թիվ 27/76 և թիվ 27/80 գրություններով ՀՀ ոստիկանությունը նշված պայմանագրերը միակողմանի լուծել է և հայտնել է հետևյալը.

« (Պայմանագիր 1) «Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարվեր՝ 650 հատ կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով), 400 հատ կոստյում /բաճկոն-տաբատ գունաքողարկող կեպիով/, սակայն մատակարարում ընդհանրապես չի իրականացվել:

(Պայմանագիր 2) «Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարվեր՝ 249 հատ կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով կ/թ), 870 հատ Փողկապ/ փողկապ սև/, 1006 հատ կոստյում (բաճկոն-տաբատ՝ կիսաբամբակյա կեպիով), սակայն մատակարարում ընդհանրապես չի իրականացվել: »

Նշված գրություններից, նախ, ընդհանրապես անհասկանալի է, թե խոսքը կոնկրետ որ չափաբաժինների մասին է գնում և կոնկրետ որ չափաբաժնով ինչքան ապրանք պետք է մատակարարվեր: Նշված գրությունից պարզվում է օրինակ, որ պետք է մատակարարվեր 870 հատ Փողկապ /փողկապ սև/: Մինչդեռ պայմանագրի 2-ի Հավելված 1-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանագրով սահմանված են մատակարարվելիք ապրանքների միանգամայն այլ թվեր՝ 3-րդ չափաբաժնով՝ ոչ թե 870 հատ Փողկապ /փողկապ սև/, այլ 2000 հատ Փողկապ /փողկապ սև/: Նշվածի մասով, փաստորեն,

Պատվի¬րատուի գրություններով մատնանշված և պայմանագրերի հավելված 1-ով նախատեսված թվերը չեն համընկնում: Անհասկանալի է նաև, թե կոնկրետ որ չափաբաժնով ինչքան ապրանք չի մատակարարվել: Ավելին, վկայակոչված գրությունից հետևում է, որ մատակարարման ենթակա և պայմանագրերով սահմանված ապրանքների թվաքանակը ընդհանրապես չի մատակարարվել, սակայն գործում առկա են հանձնման-ընդունման բազմաթիվ արձանագրություններ, դրական եզրակացություններ և հարկային հաշիվներ, որոնք ապացուցում են, որ բոլոր չափաբաժինների մասով կատարվել են մատակարարումներ: Ուստի գրությամբ ամրագրված «ընդհանրապես չի մատակարարվել» եզրույթը չի համապատասխանում իրականությանը:

2. Պայմանագրերի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված մատակարարման ժամկետը սահմանվում է՝ ըստ համապատասխան ապրանքների թվաքանակի՝ պայմանագրերը ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում, 90 օրացուցային օրվա ընթացքում, 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 20.12.2019թ.:

Այնուհետև, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության միջև՝ 25.07.2019թ. և 31.07.2019թ. կնքվել են լրացուցիչ համաձայնագրեր, որով պայմանագրերի շրջանակներում մատակարարումներն իրականացնելու ժամկետները երկարաձգվել են 30 օրացուցային օրով:

Հարկ ենք համարում նշել, որ վերը նշված համաձայնագրերը կնքելով՝ մատակարարման վերջնաժամկետ ժամկետ է սահմանվել Պայմանագիր 1-ի համար 24.08.2019թ. և Պայմանագիր 2-ի համար 30.08.2019թ.:

Այս պարագայում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք քննարկել ստորև ներկայացվող փաստական հանգամանի իրավաչափության հարցը՝ այն է, եթե ՀՀ ոստիկանության գտնում է, որ պայմանագրերի միակողմանի լուծման համար հիմք է հանդիսացել 2.1.7.1 կետի "բ" ենթակետը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, ապա ինչու է նույն ՀՀ ոստիկանությունը Պայմանագրի 1-ի և Պայմանագիր 2-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով և 25.07.2019թ. և 31.07.2019թ. կնքված լրացուցիչ համաձայնագրերով նախատեսված մատակարարման ժամկետի ավարտից հետո գրեթե 4-5 ամիս անց, երբ արդեն բաց է թողել Պայմանագիր 1-ի և Պայմանագիր 2-ի 2.1.7.1 կետի բ) ենթակետի ուժով պայմանագրերը լուծելու իրավունքը՝ սահմանված ժամկետի մասով, որոշում է կայացրել

միակողմանիորեն լուծել Պայմանագիր 1-ը և Պայմանագիր 2-ը նույն 2.1.7.1 կետի բ) ենթակետի ուժով:

3. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՅ-ԼՕ-2020/57 ընթացակարգը նախաձեռնվել է 21.02.2020թ.՝ հիմքում դնելով թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» ծածկագրերով պայմանագրերը միակողմանի լուծելը՝ որը տեղի է ունեցել 30.01.2020թ.:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.01.2020թ.–ին /տես՝ ՀՀ ոստիկանության «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ուղղված թիվ 27/76 և թիվ 27/80 գրությունները/, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը միայն 18.02.2020թ. /հիմքում դնելով 30.01.2020թ. Պայմանագիր 1-ը և Պայմանագիր 2-ը միակողմանի լուծման մասին ծանուցումները/, այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 30.01.2020թ.–ին և միայն մի քանի շաբաթ անց ՀՀ ոստիկանությունը որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ

նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՅ-ԼՕ-2019/233 և ՍՅ-ՆԳ-2019/195/: Օրինակ՝ թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ

նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք սույն ընթացակարգի հիմքերը քննելիս՝ հաշվի առնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելու փաստական հանգամանքով պայմանավորված իմպերատիվ դրույթը՝ Պատվիրատուի կողմից չպահպանելու հանգամանքը, այսինքն 30.01.2020թ. վերը նշված պայմանագիրը միակողմանիորեն լուծելուց հետո սահմանված հինգ աշխատանքային օրվա խախտմամբ տվյալները ներկայացնելու հանգամանքը, ինչպես նաև պայմանագրերով սահմանված մատակարարման վերջնաժամկետը և Պայմանագիր 1-ի համար 24.08.2019թ. և Պայմանագիր 2-ի համար 30.08.2019թ. լրանալուց հետո Պատվիրատուի կողմից գրեթե 4-5 ամիս պայմանագիրը չլուծելու հանգամանքը:

Խնդրում ենք նաև քննարկման առարկա դարձնել պայմանագրերի միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության գրության ոչ հստակ և տարակերպ մեկնաբանությունների տեղիք տվող բովանդակությունը:

Արդյունքում ՀՀ ոստիկանության կողմից թույլ տված անգործության և Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթների չպահպանման

արդյունքում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/57 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին և 02.07.2019թ.-ին կնքվել են համապատասխանաբար թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» և «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» ծածկագրով պետական գնման պայմանագրեր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքի ժամկետները:

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/76 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/80 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 02.07.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-

ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

ՀՀ ոստիկանությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.02.2020թ. թիվ 3/27/5373-20 և 3/27/5383-20 գրություններով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2536-2020 և 26/26-1/2545-2020 գրություններով «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/76 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 25.06.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/80 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 02.07.2019թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4 ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից 30.01.2020թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավել):

ՀՀ ոստիկանությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.02.2020թ. թիվ 3/27/5373-20 և 3/27/5383-20 գրություններով:

Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 30.01.2020թ.-ին՝ հիմք ընդունելով թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՃՈ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-56/4» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/76 և թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-54/4» պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 27/80 ծանուցումները www.gnumner.am համացանցային կայքում 30.01.2020թ.-ին հրապարակելու հանգամանքը, սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ 18.02.2020թ.-ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև ներքոնշյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով

դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ,**

որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2536-2020 և 26/26-1/2545-2020 գրություններով «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/57 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ